ՏԷՐՏԷՐ.– Դրօշակ ունի ձեռին, սրբոց ձեռամբ գրած, թէ՝ անյաղթ Նազար, Քաջն Նազար, մին կզարկի, ջարդի հազար: (Լացակումած) Ախ, օրհնեալներ, կրակ է դժոխային, հուր աստուածային:

ՂՈՐՈՆԹԻ.– Հ՞ը՞… վախեցնո՞ւմ ես…

ՂԱՌԱՂՈՒՌԱ.– Փի, թէ վախեցրել ես՝ հըա՛մմ…

ՏԷՐՏԷՐ.– Չէ, օրհնեալ, չէ, ճշմարիտ է, վկա աստուած կենդանի: Այդ Քաջ Նազարը ձեզնից մեծ ուժի տէր է:

ՂՈՌՈԲՈՒՂԱ.– Բո՛ո՛:

ՏԷՐՏԷՐ.– Այո՛, օրհնեալներ, փախէք՝ քանի չի եկել:

ՂՈՌՈԲՈՒՂԱ.– Փի՛ե՛… Ի՞նչ է ասում:

ՏԷՐՏԷՐ.– Ա՛ման, օրհնեալ, ճշմարիտ եմ ասում: Փախէք, ազատուեցէք: Դուք ձեր հսկաներն էք տեսել, չէք տեսել Քաջ Նազարը: Քաջ Նազարը գալիս է ոչնչացնելու հսկաների ցեղը: (Երգաձայն) Ահաւասիկ, ամեն ասեմ ձեզ եւ պատմեմ, զոր տեսի աչքով իմօք եւ լուայ ականջօք: Տեսիլ զարմանահրաշ: Հինգ հարիւր հսկաներ իմ աչքի առջեւ ջարդեց, փշրեց, փոշի շինեց, տուեց քամուն: (Ծոցից հանելով մի մասնատուփ եւ պտղուցով հանելով մի փոշի) Ահա, Էս մի հատիկ փոշին մնաց, այն էլ ես վերցրի յիշատակ: (Լաց է լինում) Մեա՛ա՛ա՛…

ՂՈՌՈԲՈՒՂԱ.– (Սաստիկ ազդուած) Ղորոնթի՛ի՛, մի փոշի է մնացե՛լ… Ղառաղուռա… Ղուզղո՞ւն…

ՂԱՌԱՂՈՒՌԱ.– Ախր ձեզ ասում էի՝ Էս մեռել ուտողին մի բերէք դեսը: Տեսա՞ք ոնց խելքդ գողացաւ:

ՂՈՌՈԲՈՒՂԱ.– (Գլուխը բռնելով) Գողացա՞ւ, Հըա՛մմ… (Տէրտէրին) Գողացա՞ր… Հըա՛մ…

ՏԷՐՏԷՐ.– Չէ, աստուած մի արասցէ:

ՂԱՐԱՂՈՒՌԱ.– (Մօտենալով տէրտէրին) Քեզ չասի՞ թէ մի վախեցնի: Ճզմեե՞մ:

ՏԷՐՏԷՐ.– (Ղռոբուղայի քամակը մտնելով) Կանիծե՛մ…

ՂՈՌՈԲՈՒՂԱ.– Բո՛, բո՛…

ՏԷՐՏԷՐ.– Կանիծեմ, որ ձեզ Էլ Նազարը ջնջի, դնի մասնատուփը: (Ուզում է դուրս գալ հսկաների օղակից) Մի ճամփա որ տայիք լաւ կլինէր: Էստեղ մի քիչ շոգ է: (Հեւում է սարսափից:)

ՂԱՌԱՂՈՒՌԱ.– Չէ՛, չենք թողնի: Դու մեզ գիր արիր, (Ղռոբուղային) Քեզ գիր արեց: Բռնի ու բաց մի թողնի դրան, մինչեւ գիրը չանցնի:

ՂՈՌՈԲՈՒՂԱ.– Հըա՛ա՛մ, (Շալակում է տէրտէրին:)